

Արձանագրություն թիվ 1

3.01.2016թ.

գ.Մարտունի

2016 թվականի հունվարի 13-ին տեղի ունեցավ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու նիստ: Նիստին ներկա էին ավագանու անդամներ Արթուր Միրզոյանը, Կարեն Հովհաննիսյանը, Տիգրան Ղազարյանը և Լևոն Օհանյանը: Նիստը նախագահեց համայնքի ղեկավար Արթուր Ասատրյանը, քարտուղար՝ աշխատակազմի քարտուղար Սարգիս Երիցյանը:

Օրակարգ.

1. Մարտունի համայնքի 2016թ. բյուջեի հաստատման մասին:
2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի և մշակութային համալիրի աշխատակիցների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. Համայնքի 2016թ. տեղական տուրքերի դրույքաչափերի մասին:

Ավագանին միաձայն հաստատեց նիստի օրակարգը:

Լսեցին.

1. Զեկուցողը (համայնքի ղեկավար Ա.Ասատրյան) ներկայացրեց 2016թ. բյուջեն եկամուտների և ծախսերի մասով.

Արտահայտվեցին.

1.Ավագանու անդամները տվեցին իրենց հավանությունը ծախսային մասի վերաբերյալ և առաջարկեցին, որ տարեսկզբի ազատ մնացորդը ուղղել նախորդ տարիների պարտավորությունների կատարմանը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով.

Մարտունի գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել համայնքի 2016թ. բյուջեն եկամտային և ծախսային մասով

Եկամուտներ

1. Գույքահարկ - 1063.9 հազար դրամ

որից՝ գույքահարկ շինություններ – 6.0 հազար դրամ

տրանսպորտային միջոցներ – 657.9 հազար դրամ

- գույքահարկի ապառք – 400.0 հազար դրամ
2. Հողի հարկ - 992.1 հազար դրամ
որից՝ իրավաբանական անձերից – 7.4 հազար դրամ
անցյալ տարիների ապառք - 600.0 հազար դրամ
3. Տեղական տուրքեր և վճար - 20.0 հազար դրամ
4. Հողի վարձավճար - 400.0 հազար դրամ
5. Համահարթեցման դոտացիա - 10317.8 հազար դրամ
6. Տարեսկզբի ազատ մնացորդ - 116.6 հազար դրամ
- Ընդամենը - 13393.8 հազար դրամ**

Ծախսեր

Աշխատավարձ ապարատ	4111 - 8400.0	հազար դրամ
Աշխատավարձ մշակույթ	4111 - 2825.0	հազար դրամ
Էլ.էներգիա	4212 - 396.0	հազար դրամ
Կապ	4214 - 45.0	հազար դրամ
Ներքին գործուղում	4221 - 300.0	հազար դրամ
Համակարգ. ծառայություններ	4232 - 80.0	հազար դրամ
Տեղեկատ. ծառայություններ	4234 - 15.0	հազար դրամ
Գրասեն.ապ.և նյութեր	4261 - 50.0	հազար դրամ
Այլ նպաստներ բյուջեից	4729 - 400.0	հազար դրամ
Բնապահ.վճար	4823 - 40.0	հազար դրամ
Նվիրատվ.կազմակերպություն	4819 - 65.0	հազար դրամ
Պահուստային ֆոնդ	4891 - 794 377	հազար դրամ

Տարեսկզբի ազատ մնացորդ 116.6 հազար դրամը ուղղել նախորդ տարիների պարտավորությունների կատարմանը:

Քվեարկության արդյունքները են՝

կողմ - 4 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ավագանու անդամներ՝	Ա.Միրզոյան
	Կ.Հովհաննիսյան
	Տ.Ղազարյան
	Լ.Օհանյան
Համայնքի ղեկավար՝	Ա.Ասատրյան
Քարտուղար՝	Ս.Երիցյան

Ղեկավարվելով ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով

Մարտունի գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

2.Հաստատել համայնքի ղեկավարի աշխատակազմի և մշակութային համալիրի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն թիվ 1 հավելվածի

Համայնքի ղեկավարի աշխատակազմ			Հավելված թիվ 1
Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորը	Ծածկագիրը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1		220 000
Աշխատակազմի քարտուղար	1	1-2-1	150 000
Առաջատար մասնագետ	1	3-1-1	125 000
Տեխ.սպաս.իրականացնող	1		95 000
Բանվոր	1		74 000

Մշակութային համալիր

Հաստիքի անվանումը	Հաստիքի միավորը	Ծածկագիրը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
Մշակույթի տան տնօրեն	1		74 000

Գրադարանի վարիչ	1	74 000
Հավաքարար	1	78 000

Քվեարկության արդյունքները են՝

կողմ - 4 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ավագանու անդամներ՝
 Ա.Միրզոյան
 Կ.Հովհաննիսյան
 Տ.Ղազարյան
 Լ.Օհանյան

Համայնքի ղեկավար՝
 Ա.Ասատրյան

Քարտուղար՝
 Ս.Երիցյան

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ մասով

Մարտունի գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

Համայնքի տարածքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվության համար, համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել 2016թ. ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր առևտրի կետին 10 000 (տաս հազար) - ական դրամ գումարի չափով:

Քվեարկության արդյունքները են՝

կողմ - 4 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ավագանու անդամներ՝
 Ա.Միրզոյան
 Կ.Հովհաննիսյան
 Տ.Ղազարյան
 Լ.Օհանյան

Համայնքի ղեկավար՝
 Ա.Ասատրյան

Քարտուղար՝
 Ս.Երիցյան